

Երրորդ անձանց վարքագծի կանոնագիրք

Մարտ 2018թ.



Բովանդակություն

1

Ներածություն

Մահմանումներ	2
Բարձրաձայնում	3
Համապատասխանություն սույն վարքագծի կանոնագրքին, օրենքներին և կարգավորումներին	3
Համապարփակ վերլուծություն և մոնիթորինգ	3

4

Վստահության ամրապնդում, թե ինչպես ենք վարում բիզնեսը

Անկախություն	4
Շահերի բախում և հատուկ ուշադրության արժանի իրավիճակներ	4
Արդար մրցակցություն	5
Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքար	5
Տնտեսական հանցագործություն և փողերի լվացում	6
Ինսայդերական գործարք/առևտուր	6
Պատժամիջոցներ և արտահանման հսկողություն	6

7

Վստահության ամրապնդում միմյանց հանդեպ

Աշխատանքի ընդունելություն և աշխատանքային հարաբերություններ	7
Աշխատավարձ և աշխատաժամեր	7
Երրորդ անձանց փոխգործակցությունն անձնակազմի հետ	8
Մանկական աշխատուժ	8
Մարդկանց թրաֆիքինգ և ժամանակակից ստրկություն	8
Առողջություն և անվտանգություն	8
Միավորում կազմելու ազատություն	8

9

Վստահության ամրապնդում մեր համայնքներում

Շրջակա միջավայրի պահպանություն	9
--------------------------------	---

10

Վստահության ամրապնդում, թե ինչպես ենք օգտագործում տեղեկությունները

Գաղտնիություն և տվյալների պաշտպանություն	10
Մտավոր սեփականություն	10
SS անվտանգություն	10
Սոցիալական ցանցեր	11

11

Սույն վարքագծի կանոնագրքի ընդունում



Ներածություն

ՔԿԿ-ն հանդիսանում է մասնագիտական ծառայությունների մատուցման համաշխարհային առաջատար և համագործակցում է աշխարհի ամենահայտնի կազմակերպությունների հետ: ՔԿԿ-ի նպատակը հասարակության մեջ վստահության ամրապնդումն ու կարևոր խնդիրների լուծումն է:

ՔԿԿ-ն անվերապահորեն հետևում է էթիկայի և մասնագիտական ստանդարտներին, օրենքներին, կարգավորումներին, ներքին քաղաքականությանը, ինչպես նաև հետևյալ հիմնական արժեքներին՝



Գործել ազնիվ

- Բարձրաձայնել այն, ինչը ճիշտ է, եթե նույնիսկ դժվար է թվում
- Ակնկալել և մատուցել լավագույն որակի արդյունքներ
- Որոշումներ կայացնել և գործել այնպես, կարծես մեր անձնական հեղինակության հարցն է



Կատարել փոփոխություն

- Մնալ տեղեկացված և հարցեր տալ աշխարհի ապագայի մասին
- Մեր գործողություններով ազդեցություն թողնել մեր գործընկերների, հաճախորդների և հասարակության վրա
- Արագ արձագանքել անընդհատ փոփոխվող միջավայրին



Դրսևորել հոգատարություն

- Ջանք գործադրել հասկանալու յուրաքանչյուր անհատին և թե ինչն է նրանց համար կարևոր
- Ընդունել յուրաքանչյուր անձի ներդրման արժեքը
- Աջակցել ուրիշներին, որպեսզի աճեն և աշխատեն լավագույնս



Աշխատել միասին

- Համագործակցել և փոխանակել հարաբերությունները, գաղափարներն ու գիտելիքները սահմաններից այն կողմ
- Փնտրել և ինտեգրել բազմաթիվ հեռանկարներ, մարդկանց և գաղափարներ
- Տրամադրել և խնդրել արձագանք՝ ինքներս մեզ և ուրիշներին կատարելագործելու համար



Վերապատկերացնել հնարավորը

- Համարձակվել վիճարկել ստատուս քվոն և փորձել նոր մարտահրավերներ
- Նորարարել, փորձարկել և սովորել ձախողումից
- Պատրաստակամությամբ ընդունել յուրաքանչյուր նոր գաղափար և հնարավորություն

ՔԿԸ-ն հանդիսանում է ՄԱԿ-ի Գլոբալ համաձայնագրի /ԳՀ/ (UNGC) կողմ և հանձնառու է նաև այն 10 սկզբունքներին, որոնք ՄԱԿ-ի ԳՀ-ի հիմքն են հանդիսանում: Այդ սկզբունքներն արտացոլված են սույն կանոնագրքում:

ՔԿԸ-ի Երրորդ անձանց վարքագծի կանոնագիրքը («Կանոնագիրք») նկարագրում է ազնվության և բիզնեսի վարման նվազագույն չափանիշները, որոնք ՔԿԸ-ն ակնկալում է այն Երրորդ անձանցից, որոնց հետ համագործակցում է: ՔԿԸ-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք ազնվության և բիզնեսի վարման համարժեք պայմաններ կպահանջեն իրենց անձնակազմից և իրենց կազմակերպությունից դուրս ցանկացած այլ անձանցից, որոնք ներգրավված են ծառայություններ մատուցելու ՔԿԸ-ի համար կամ ՔԿԸ-ի հետ:

ՔԿԸ-ն ընդունում է, որ վարքագծի ոչ մի կանոնագիրք չի կարող հասցեագրել բոլոր հնարավոր դեպքերը, որոնց հետ կարող են առնչվել Երրորդ անձինք: Այդ իսկ պատճառով սույն Կանոնագիրքը չի փոխարինում Երրորդ անձանց վարքագծի ներքին կանոնագրքի դրույթներին՝ ողջամիտ դատողություններով առաջնորդվելու և բիզնեսի պատշաճ վարման գծով պատասխանատվության և պարտավորության մասով: Երրորդ անձինք խրախուսվում են լրացուցիչ ուղղորդում և աջակցություն փնտրել ՔԿԸ-ի այն անձանցից, որոնք նշանակված են որպես իրենց ծառայությունների համար պատասխանատու ՔԿԸ-ի կողմից:

Սահմանումներ

Երրորդ անձ/Երրորդ անձինք

Կազմակերպությունները (ներառյալ՝ իրենց անձնակազմը*) կամ ենթակապալառու անհատները, որոնք աշխատում են ՔԿԸ-ի համար կամ ՔԿԸ-ի հետ կամ մատակարարում են ապրանքներ, մատուցում են ծառայություններ ՔԿԸ-ին:

* Անձնակազմ՝ Երրորդ անձանց աշխատակիցներ կամ ենթակապալառուներ:

Բարձրաձայնում

Մեր ստանդարտը

PwC-ն պարտավորվում է պայքարել հնարավոր խախտումների դեմ և պաշտպանել իր գործընկերներին/դեկլարներին և աշխատակիցներին մտահոգությունների մասին բարեխղճորեն զեկուցելու հետևանքով հետապնդումից:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք բարեխղճորեն կզեկուցեն ցանկացած մտահոգության մասին, որը կարող է առաջանալ PwC-ի գործունեության հետ կապված (ներառյալ՝ PwC-ին ապրանքներ մատակարարելու կամ ծառայություններ մատուցելու ժամանակ) և սույն Կանոնագրքի, օրենքների, կարգավորումների կամ էթիկայի կամ մասնագիտական ստանդարտների հնարավոր խախտումների վերաբերյալ:

Այնքանով, որքանով արգելված չէ օրենսդրությամբ կամ կարգավորումներով, PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կբարձրաձայնեն սույն Կանոնագրքին վերաբերող ցանկացած մտահոգություն հետևյալ միջոցներից որևէ մեկով.

- անձանց միջոցով, որոնք նշանակված են որպես Երրորդ անձանց ծառայության(ների) պատասխանատու՝ PwC-ի հետ կամ PwC-ի համար աշխատելու ժամանակ,
- PwC-ի համապատասխան կապի միջոցներով,
- կապվելով PwC-ի գլոբալ էթիկայի և համապատասխանության օժանդակ գծի հետ՝ pwc.com/ethics կայքի միջոցով:

Մտահոգությունները կարող են բարձրաձայնվել անանուն:

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կտեղեկացնեն իրենց անձնակազմին, որ նրանք չեն ենթարկվի հետապնդումից՝ բարեխղճորեն մտավախությունները բարձրաձայնելու համար: PwC-ն կուսումնասիրի զեկուցված մտահոգությունները և կապ կհաստատի Երրորդ անձանց հետ, որպեսզի ինչպես հարկն է կառավարի իրավիճակն ու կատարի խնդրի համապատասխան ուսումնասիրություն:

Համապատասխանություն սույն Կանոնագրքին, օրենքներին և կարգավորումներին

Երրորդ անձինք պետք է համապատասխանեն տեղական և միջազգային գործող օրենսդրությանը և կարգավորումներին և ակնկալվում է, որ համապատասխանեն սույն Կանոնագրքի պահանջներին: Գործող օրենսդրությամբ կամ կարգավորումներով առավել խիստ պայմաններ սահմանված լինելու դեպքում, վերջիններս պետք է գերակայեն սույն Կանոնագրքի պահանջներին:

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք, անհրաժեշտության սահմաններում, կիրականացնեն սույն Կանոնագրքին համապատասխան քաղաքականություն, ընթացակարգեր և վերապատրաստման ծրագրեր:

Համապարփակ վերլուծություն և մոնիթորինգ

Մեր ստանդարտը

PwC-ն պարտավորվում է վերահսկել համապատասխանությունն իր ներքին ստանդարտներին և քաղաքականությանը, որը հանդիսանում է կարևոր բաղադրիչ PwC-ի հաջող գործունեության համար:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք ունեն գործընթացներ և վերահսկողության միջոցներ սույն Կանոնագրքի դրույթներին համապատասխանելու համար:

Անհրաժեշտության դեպքում, PwC-ն իրականացնում է ռիսկերի վրա հիմնված Երրորդ անձանց հետ հարաբերությունների գնահատում: PwC-ն ակնկալում է, որ անհրաժեշտության դեպքում Երրորդ անձինք կտրամադրեն ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն՝ PwC-ի կողմից ձեռնարկված գնահատմանը օժանդակելու համար:

Եթե PwC-ն որոշում է, որ Երրորդ անձինք խախտել են սույն Կանոնագիրքը, ապա կարող է պահանջել Երրորդ անձանցից իրականացնել շտկման պլան կամ, որոշակի դեպքերում, կարող է կասեցնել/դադարեցնել հարաբերությունը Երրորդ անձանցի հետ:



Վստահության ամրապնդում, թե ինչպես ենք վարում բիզնեսը

Անկախություն

Մեր ստանդարտը

PwC-ն գործում է կարգավորվող ոլորտում և պետք է համապատասխանի գործող օրենքներին, տեղական և միջազգային ստանդարտներին և պարտավորություններին՝ աուդիտի հաճախորդների նկատմամբ անկախության պահպանման գծով: PwC-ն ակտիվորեն խուսափում և հասցեագրում է այն հանգամանքները, որոնք ստեղծում են կամ կարող է թվալ, որ ստեղծում են իր անկախության համար սպառնալիքներ: Ամբողջականության և օբյեկտիվության հիմնարար սկզբունքների պահպանումը կարևոր է մասնագիտական բոլոր ծառայությունները մատուցելիս, և անկախ լինելն աջակցում է այդ սկզբունքների պահպանմանը, երբ PwC-ն իր հաճախորդներին մատուցում է աուդիտի ծառայություններ:

PwC-ն սահմանում է անկախությունը որպես բացակայություն այն շահերից և հարաբերություններից, որոնք խանգարում են, կամ, ըստ երևույթին, կարող են վնասել PwC-ի օբյեկտիվությունն աուդիտորական ծառայություններ մատուցելու հարցում:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Որոշակի հանգամանքներում Երրորդ անձինք պետք է համապատասխանեն PwC-ի նկատմամբ կիրառվող անկախության որոշ պարտավորություններին: Դա կախված կլինի PwC-ի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթից, ներառյալ՝ Երրորդ անձինք, որոնք աջակցում են PwC-ին մասնագիտական ծառայություններ մատուցելիս, և այն Երրորդ անձինք, որոնց հետ PwC-ն համագործակցում է շուկայում: PwC-ն այդպիսի Երրորդ անձանց կտեղեկացնի իրենց պարտավորությունների մասին:

PwC-ի պահանջով Երրորդ անձինք պետք է համապատասխանեն անկախությանը վերաբերող պահանջներին, ինչպես նաև տեղեկացնեն իրենց անձնակազմին անկախության որոշակի պարտավորությունների կատարման պատասխանատվության մասին:

Շահերի բախում և հատուկ ուշադրության արժանի իրավիճակներ

Մեր ստանդարտը

PwC-ն պարտավորվում է բացահայտել և վերացնել շահերի իրական և հավանական բախումները, ինչպես նաև հատուկ ուշադրության արժանի իրավիճակները, որոնք կարող են առաջանալ իր գործունեության ընթացքում՝ նախքան ծառայություններն ընդունելը, սկսելը կամ շարունակելը:

PwC-ն սահմանում է շահերի բախումը, որպես ցանկացած հանգամանք, որը կարող է կասկածի տակ դնել PwC-ի օբյեկտիվությունն ցուցաբերելու ունակությունը ծառայություններ մատուցելու կամ իր աշխատանքի ընթացքում: PwC-ն սահմանում է հատուկ ուշադրության արժանի իրավիճակն այնպիսի հանգամանք, որը կարող է PwC-ի համար ստեղծել առևտրային, հեղինակության կամ հաճախորդների հետ կապված լուրջ ռիսկեր:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Եթե Երրորդ անձանց հայտնի դառնա իրական կամ հավանական շահերի բախման կամ հատուկ ուշադրության արժանի իրավիճակի մասին, որը կարող է ազդել PwC-ի հետ կամ PwC-ի համար աշխատանքի վրա, ապա նրանք դրա մասին պետք է ժամանակին տեղեկացնեն PwC-ին:

Կախված հանգամանքներից՝ Երրորդ անձանցից կարող է պահանջվել ձեռնարկել համապատասխան միջոցներ շահերի բախման կամ հատուկ ուշադրության արժանի իրավիճակի կառավարման համար:

Արդար մրցակցություն

Մեր ստանդարտը

PwC-ն հավատարիմ է արդար մրցակցությանը և չի հանդուրժում որևէ հակամրցակցային գործունեություն:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք ձեռնպահ կմնան ցանկացած անարդար մրցակցությունից՝ կիրառելով անվստահության և մրցակցության մասին գործող օրենքները և կարգավորումները՝ անկախ այն փաստից՝ գործում են միայնակ, թե այլ կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հետ համատեղ:

Մասնավորապես, Երրորդ անձինք չպետք է ստորագրեն որևէ համաձայնագիր, պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես, անօրինական կերպով սահմանափակելով մրցակցությունը՝ ինչպիսիք են սահմանված գները, փոխհատուցումը կամ օգուտները կամ բաժանեն հաճախորդներին, շուկաները, մարդկանց կամ ծառայությունները PwC-ի անունից կամ PwC-ի համար կամ այլ ձևով PwC-ի հարաբերությունների հետ կապված:

Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքար

Մեր ստանդարտը

PwC-ն որևէ կերպ չի հանդուրժում կոռուպցիան կամ կաշառակերությունը: Միջնորդելը, ընդունելը, առաջարկելը, խոստանալը, կաշառք տալը կամ այլ ոչ պատշաճ, ներառյալ՝ «արտահերթություն» ստանալու համար վճարումներ կատարելը խստիվ արգելվում են՝ անկախ այն փաստից այդ գործողությունները կատարվում են ուղղակիորեն կամ որևէ երրորդ անձանց միջոցով:

PwC-ն կոռուպցիան սահմանում է որպես ոչ պատշաճ վճարներ տալը կամ այլ առավելություններ տրամադրելը, ապօրինի/հանցավոր վարքագիծը, մասնավոր շահի համար վստահված իշխանությունը չարաշահելը կամ ոչ պատշաճ առավելության ապահովումը: PwC-ն կաշառակերությունը սահմանում է որպես գումար, նվեր կամ որևէ այլ արժեք (ներառյալ՝ ոչ դրամական արժեքը, օրինակ՝ պրակտիկայի կամ վերապատրաստման առաջարկելը) առաջարկելը, խոստանալը, տալը, ընդունելը կամ միջնորդելը՝ որպես խթան կամ պարգևատրում անօրինական, ոչ բարոյական, ոչ պատշաճ, վստահության խախտում կամ կաշառքի միջոցով ստացողի դատողության կամ որոշումների կայացման վրա ազդող գործողության կատարում: PwC-ն սահմանում է «արտահերթություն» ստանալու համար վճարումները՝ որպես ցանկացած արժեքի վճարում, նույնիսկ եթե փոքր է, կանխիկ կամ այլ տեսակի, գործող կամ նախկին պետական պաշտոնյաներին՝ կատարելու այն սովորական գործառնությունները, որոնք նրանք այլ կերպ պարտավոր են կատարել (օրինակ՝ արագացնել թույլտվությունները, լիցենզիաները, վիզաները, փոստային կամ կոմունալ ծառայությունները):

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է ներգրավված լինեն կոռուպցիայի, կաշառակերության կամ որևէ այլ գործունեության մեջ (ներառյալ՝ ոչ պատշաճ վճարումները), որոնք կարող են ենթադրել ներգրավվածություն կոռուպցիայի կամ կաշառքի մեջ՝ PwC-ի հետ կամ PwC-ի համար աշխատելիս: Այդպիսի գործողությունները ներառում են «արտահերթություն» ստանալու համար վճարումները կամ դրանց տրամադրման կամ ստանալու արտոնությունները, որոնք կարող են ընկալվել որպես կաշառք PwC-ի համար կամ PwC-ի անունից:

Երրորդ անձինք չպետք է ընդունեն կամ տրամադրեն որևէ նվեր կամ օգնություն գործող կամ նախկին պետական պաշտոնյաներից կամ առևտրային կազմակերպություններից՝ PwC-ի համար կամ PwC-ի անունից՝ առանց ստանալու PwC-ի կողմից նախնական հավանություն:

Տնտեսական հանցագործություն և փողերի լվացում

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն չի հանդուրժում տնտեսական հանցագործության որևէ դրսևորում, ներառյալ՝ փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը:

ՔԿԸ-ն տնտեսական հանցագործությունը սահմանում է որպես ապօրինի գործողություններ, որոնք իրականացվել են ֆինանսական կամ տնտեսական շահի համար: ՔԿԸ-ն սահմանում է փողերի լվացումը որպես մի գործընթաց, որի ժամանակ ապօրինի գործողություններից ստացված հասույթը քողարկված է այնպես, կարծես այն առաջացել է օրինական աղբյուրներից: Փողերի լվացումը ներառում է այդպիսի հասույթի թաքցնելը, ձեռքբերումը, օգտագործումը կամ տիրապետումը կամ հեշտացնելն այդպիսի հասույթի ձեռքբերումը, օգտագործումը, պահպանումը կամ վերահսկողությունը:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է մատուցեն այնպիսի ծառայություններ կամ համաձայնության մեջ մտնեն այնպիսի գործարքների իրականացման համար, որոնք նպաստում են կամ կարող են ենթադրել, որ ՔԿԸ-ն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված է տնտեսական հանցագործության մեջ, ներառյալ՝ փողերի լվացման գործունեությունները: Երրորդ անձինք չեն կարող միջոցներ ուղղել կամ աջակցել ապօրինի գործունեություններին (օրինակ՝ ահաբեկչություն, հարկերից խուսափում, խարդախություն):

Ինսայդերական գործարք/առևտուր

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն չի հանդուրժում ներքին տեղեկության առևտուրը կամ դրա ոչ պատշաճ բացահայտումը:

ՔԿԸ-ն ներքին տեղեկությունը սահմանում է որպես տվյալ կազմակերպության մասին տեղեկություն (օրինակ՝ ֆինանսական կանխատեսումները, միաձուլման և ձեռքբերման առաջարկները և հիմնական կադրային փոփոխությունները), որոնք չեն հրապարակվել: Ներքին տեղեկությունը կարող է ստացվել ցանկացած աղբյուրից, ոչ միայն ՔԿԸ-ից:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է զբաղվեն ներքին (ինսայդերական) առևտրով, ներքին (ինսայդերական) գործարքով, ոչ պատշաճ գնումներով կամ ներքին տեղեկության բացահայտմամբ, անկախ նրանից՝ տեղեկությունը ձեռք է բերվել ՔԿԸ-ի հետ կամ ՔԿԸ-ի համար աշխատելու ընթացքում:

Երրորդ անձը, որը տիրապետում է տվյալ կազմակերպության մասին ներքին (ինսայդերական) տեղեկության, չի կարող գնել կամ վաճառել այդ ընկերության որևէ արժեթուղթ:

Պատժամիջոցներ և արտահանման հսկողություն

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն չի իրականացնում ոչ մի գործունեություն և ոչ էլ օժանդակում է մեկ այլ կողմի այնպիսի գործունեություն, որոնք կհանգեցնեն տնտեսական պատժամիջոցների կամ արտահանման հսկողության օրենքների ու կարգավորումների խախտմանը:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է համապատասխանեն տնտեսական պատժամիջոցներին և արտահանման հսկողությանը վերաբերող գործող օրենքներին և կարգավորումներին և խուսափեն այնպիսի գործողություններից, որոնք իրենց կամ ՔԿԸ-ին թույլ կտան գործել տնտեսական պատժամիջոցների և արտահանման հսկողության խախտումներով:



Վստահության ամրապնդում միմյանց հանդեպ

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կապահովեն աշխատանքային այնպիսի պայմաններ, որոնք կհամապատասխանեն միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքներին և ստանդարտներին, ներառյալ՝ Մարդու իրավունքների միջազգային օրինագծում արտահայտված և Աշխատանքի միջազգային կազմակերպության («ԱՄԿ») աշխատանքի բնագավառի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին հռչակագրում ամրագրված հիմնարար իրավունքներին վերաբերող սկզբունքներին:

Աշխատանքի ընդունելություն և աշխատանքային հարաբերություններ

Մեր ստանդարտը

PwC-ն բոլորին աշխատանքային հավասար հնարավորություններ է ընձեռում:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է դրսևորեն խտրականություն որևէ անձի նկատմամբ աշխատանքի ընդունելության և աշխատանքային հարաբերությունների ընթացքում: Մա ներառում է խտրականություն հիմնված ռասայի, էթնիկական պատկանելիության, գույնի, տարիքի, սեռի, գենդերային ինքնության կամ արտահայտության, սեռական կողմնորոշման, քաղաքական համոզմունքների, քաղաքացիության, ազգային ծագման, կրոնի, հաշմանդամության, ծնողական կարգավիճակի, տնտեսական կամ դասակարգային կարգավիճակի, վետերանի կարգավիճակի կամ ցանկացած այլ պաշտպանված կարգավիճակի կամ բնութագրի վրա, որը կապված չէ անհատի արժանիքների կամ պաշտոնին բնորոշ պահանջների հետ:

Աշխատավարձ և աշխատաժամեր

Մեր ստանդարտը

PwC-ն համապատասխանում է աշխատավարձին, աշխատաժամին և արտաժամյա աշխատանքին վերաբերող գործող օրենքների և կարգավորումների պահանջների պահպանմանը:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է սահմանեն աշխատանքային ժամերը, աշխատավարձերը և արտաժամյա աշխատանքի վարձատրությունը՝ համաձայն այն երկրի կամ երկրների օրենքների և կանոնակարգերի, որտեղ նրանք գործում են:

Երրորդ անձինք պետք է վճարեն առնվազն գործող նվազագույն աշխատավարձի չափով: Հասկանալի է, որ արտաժամյա աշխատանք երբեմն կարող է պահանջվել, սակայն PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կիրականացնեն գործողություններ, որով կսահմանափակեն արտաժամյա աշխատանքն ու կխրախուսեն մարդասիրական և արդյունավետ աշխատանքի պայմանները:

Երրորդ անձանց փոխգործակցությունն անձնակազմի հետ

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն ապահովում է անվտանգ և առանց խտրականության աշխատանքային միջավայր:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է ապահովեն առանց վիրավորանքի, բռնության, սպառնալիքի, խանգարող և այլ ոչ պատշաճ պահվածքի աշխատանքային միջավայր և չպետք է հանդուրժեն ոտնձգություններ և այլ անհարգալից վարք, ներառյալ՝ սեռական ոտնձգությունները, խտրականությունները և բռնարարքները:

Մանկական աշխատուժ

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն դեմ է և չի հանդուրժում մանկական աշխատանքի որևէ դրսևորում:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է օգտագործեն մանկական աշխատուժ և պետք է աշխատանքի ընդունեն միայն այն անձանց, որոնք բավարարում են գործող օրենսդրական տարիքի նվազագույն պահանջին՝ աշխատելու այն երկրում կամ երկրներում, որտեղ նրանք գործում են:

Մարդկանց թրաֆիքինգ և ժամանակակից ստրկություն

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն դեմ է և չի հանդուրժում մարդկանց թրաֆիքինգի և ժամանակակից ստրկության որևէ դրսևորում:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է ներգրավված լինեն կամ աջակցեն մարդկանց թրաֆիքինգը կամ ժամանակակից ստրկությունը, ներառյալ՝ հարկադիր, կապակցված կամ բռնի աշխատանքը:

Առողջություն և անվտանգություն

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ն պարտավորվում է ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր՝ մարդու իրավունքների միջազգային հռչակագրերին համապատասխան:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է ապահովեն առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր՝ մարդու իրավունքների միջազգային հռչակագրերին համապատասխան:

Երրորդ անձինք պետք է նվազագույնի հասցնեն և արձագանքեն աշխատավայրում տեղի ունեցող առողջությանն ու անվտանգությանն առնչվող ռիսկերին և դժբախտ պատահարներին և ապահովեն համապատասխան անհատական պաշտպանական միջոցները:

Միավորում կազմելու ազատություն

Մեր ստանդարտը

ՔԿԸ-ի գործընկերները/ղեկավարները և անձնակազմի իրավունք ունեն օրինական ձևով կազմել և իրենց իսկ ընտրությամբ միանալ կազմակերպություններին և խաղաղ համագործակցել:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

ՔԿԸ-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք թույլատրում են իրենց անձնակազմին օրինական ձևով կազմել և միանալ կազմակերպություններին և խաղաղ համագործակցել:



Վստահության ամրապնդում մեր համայնքներում


Շրջակա միջավայրի պահպանություն

Մեր ստանդարտը

PwC-ն ձգտում է նվազագույնի հասցնել իր գործողությունների ուղղակի և անուղղակի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և շարունակաբար բարելավում է շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող ցուցանիշները:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կհայտնաբերեն և կկառավարեն իրենց կազմակերպության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք նվազագույնի կհասցնեն ջերմոցային գազերի արտանետումները և կնախաձեռնեն միջոցառումներ՝ բնապահպանական պատասխանատվության, թափոնների արդյունավետ կառավարման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը նպաստելու համար:



Վստահության ամրապնդում, թե ինչպես ենք օգտագործում տեղեկությունները

Գաղտնիություն և տվյալների պաշտպանություն

Մեր ստանդարտը

PwC-ն հարգում է իր հաճախորդներին, գործընկերներին/դեկլարաններին, աշխատողներին և բոլոր այն անձանց պատկանող և վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը, որոնց հետ գործնական առնչություն ունի: PwC-ն պաշտպանում է անձնական և բոլոր տեսակի այլ գաղտնի տեղեկությունները:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է վարեն և բացահայտեն PwC-ի հետ իրենց փոխհարաբերությունների ընթացքում ձեռք բերած անձնական տվյալներն ու գաղտնի տեղեկությունը միայն PwC-ի թույլտվության և դեկլարաման ներքո, ինչպես նաև գործող օրենքների և կարգավորումների պահանջով:

Երրորդ անձինք պետք է պաշտպանեն անձնական տվյալները և գաղտնի տեղեկությունը չարտոնված և անօրինական օգտագործումից, բացահայտումից, հասանելիությունից, կորստից, փոփոխությունից, վնասումներից և ոչնչացումից:

Մտավոր սեփականություն

Մեր ստանդարտը

PwC-ն պաշտպանում է իր մտավոր սեփականությունը և հարգում այլոց մտավոր սեփականության իրավունքը:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք պետք է հարգեն PwC-ի և այլոց մտավոր սեփականության իրավունքները: Սա նշանակում է, օրինակ, Երրորդ անձինք չեն կարող օգտագործել PwC-ի մտավոր սեփականությունն այնպիսի ձևով, որը թույլատրված չէ PwC-ի կողմից, ոչ էլ կարող են օգտագործել այլ անձանց կողմից չլիցենզավորված ծրագրեր կամ տեխնոլոգիաներ PwC-ի համար կամ PwC-ի հետ կապված աշխատանքներ կատարելիս:

SS անվտանգություն

Մեր ստանդարտը

PwC-ն պաշտպանում է իրեն վստահված տեղեկությունը, ինչպես նաև ֆիզիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվները՝ տեղեկատվական անվտանգության հսկողության մշակման և իրականացման միջոցով:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է օգտագործեն անվտանգության հսկման համակարգեր, որոնք բավարարում են PwC-ի պահանջներին՝ տեղեկությունները, ներառյալ՝ ֆիզիկական և էլեկտրոնային ակտիվները, պահպանելու և պաշտպանելու համար, որոնք ձեռք են բերվել PwC-ի, PwC-ի հաճախորդների և այլ երրորդ անձանց կողմից:

Սոցիալական ցանցեր

Մեր ստանդարտը

PwC-ն պատասխանատվությամբ է օգտագործում սոցիալական ցանցերի հարթակները և իր առցանց հանրային հաղորդակցություններում հանդես է գալիս քաղաքավարի և հարգալից կերպով:

Կիրառությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք պետք է զերծ մնան սոցիալական ցանցերում անհարգալից, ոչ պրոֆեսիոնալ, զրպարտիչ, խտրական և արգելված գործողությունից: Երրորդ անձինք չպետք է գործեն կամ խոսեն PwC-ի անունից, ներկայանան որպես PwC կամ արտահայտեն PwC-ին վերագրվող ցանկացած տեսակետ, եթե այն PwC-ի կողմից ուղղակիորեն լիազորված չէ:

Սույն Կանոնագրքի ընդունումը

Երրորդ անձինք, որոնք աշխատում են PwC-ի հետ կամ PwC-ի և նրա հաճախորդների համար, և որոնց հասցեգրված է սույն Կանոնագիրքը, համաձայնում են՝

- պահպանել սույն Կանոնագրքով սահմանված պահանջներն ու ակնկալիքները,
- PwC-ի կողմից ձեռնարկված իրավական նախաձեռնությունների համար տրամադրել ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, և
- համապատասխանել այն երկրում կամ երկրներում գործող օրենսդրություններին և կարգավորումներին, որտեղ նրանք գործում են:

pwc.com/thirdpartycodeofconduct

© 2018 PwC: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն Գանտնագրքում «PwC», «մեր» և «մենք» տերմիններն օգտագործվում են հավաքական ձևով կամ փոխանակելիորեն՝ (i) անհատ PwC մասնագետը, ներառյալ՝ գործընկերները/ղեկավարները և աշխատակիցները, կամ (ii) PricewaterhouseCoopers International Limited-ի անդամ ընկերությունների ցանցը, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին և անկախ իրավաբանական անձ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.pwc.com/structure:

336647-2017 JP